

վանքը, Կիւլպէնկ 1821ին, Աւետիք 1831ին և Կիւլլապի 1846ին, ի յիշատակ ննջեցելոց իրենց ծախքով շինել կուտան ուխտաւորներու երեք սննեակներ վանքին Շորաթաղին մէջ, երեք յիշատակարաններու օրինակները հոս կը դնենք.

Ա.

«Յշակէ. շքեղատիպ սննեակս Կեսարացի օրհնեայ Թալաս գեղէն Կիւլպէնկեան գերազնիւ մ՛ի. Կիւլպէնկին, որ դիմեալ աստ իւրակամ կամօքն վերստին ստացեալ այս սննակս և եթող յաւիտենական յշակ. իւրեան և ննջեցելոցն, 1821».

Բ.

«Յշակէ սննեակս Թալացի տաքինա սէր Կիւլպէնկեան մահտեի Աւետիք աղային վասն պայծառութեան տո՛մրց. յշակ. արգարոց օր՛ նութեամբ եղիցի, յամի Տոն. 1831»

Գ.

«Յշակէ. սննեակս Թալացի Կիւլպէնկեան մ՛ի. Կիւլպէնկի օրդի մ՛ի. Կիւլլապի աղայի Մամիկոնեանց. 1846»

Կիւլպէնկեաններու յիշատակն է նաեւ Ս. Գերեզմանի գրան պատկերը, որ ունի հետեւեալ յիշատակարանը.

«Յիշատակ է պատկերս Կիւլպէնկեան գերդաստանին Թալացոց. 1877.

նկր.

Գ. ս. իսմ.»:

ԱԻԵՏԻՔ ՊԿ. և ՊԵ. ԵՐՁՆԿԱՅԻ.—Ոմանք Աւետիք պատրիարքը երկարի յիմնակով մտող կը կոչեն, որդի Քէշիչ օղլու Պաղտասարին, Զո. 1691ին եպս. Սեպուհ լիբան. ՊԿ. (1702-3). Ամբեցի Մինաս ՊԵ. մասին տեղի ունեցած բողոքներուն վրայ, կ'ստանձնէ Երուսաղէմի պատրիարքութեան պաշտօնն ալ, և կը միացնէ երկու պատրիարքութիւնները. 1702ին յատուկ հրո-